

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՊՈՂՈՍՅԱՆ ԹԱՄԱՐԱ ՆԵԼՍԻԿԻ
17-ՐԴ ԴԱՐԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՏՊԱԳԻՐ ԳՐՔԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Ժ. 02. 01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ն. Բ. Պողոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գ. Կ. Խաչատրյան
քանասիրական գիտությունների թեկնածու

Առաջատար կազմակերպություն՝ **Ա. Ա. Կարապետյան**
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2020 թ. մարտի 30-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում: Հասցեն՝ 0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. փետրվարի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ն. Մ. Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերն առանձնահատուկ դեր ունեն հայ տպագրության և հայոց լեզվի պատմության ուսումնասիրման համար: Այս դարաշրջանը կարևորվում է մեր լեզվի զարգացման նոր փուլի սկզբնավորմամբ՝ աշխարհաբարի վաղ լեզվավիճակի ի հայտ գալով: Աշխարհաբարի պատմությունը, այդ թվում՝ նրա ձևավորման սկզբնական փուլը, դեռևս բացահայտման, նորանոր հետազոտությունների կարիք ունեն:

Թեև աշխարհաբարի տարրերն ի հայտ են գալիս 17-րդ դարից առաջ ստեղծված գրական հուշարձաններում, սակայն 17-րդ դարում են տպագրվում աշխարհաբար առաջին գրքերը՝ «Արհեստի համարողութեան ամբողջ և կապարեալ» (Մարսել, 1675), «Պարզաբանութիւն հոգեւնուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» (Վենետիկ, 1687), «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի» (Ամստերդամ, 1699): Այս երկերի լեզվական համակարգը պարունակում է ոչ թե աշխարհաբարյան *առանձին* տարրեր, այլ հայերենի լեզվական մի շարք նոր իրողությունների ամբողջություն է:

Քննելով 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական համակարգը՝ հնարավոր է ոչ միայն վեր հանել դրա առանձնահատկությունները, այլև պատկերացում կազմել աշխարհաբարի վաղ շրջանի նկարագրի, մշակման ընթացքի և արևելահայերենի, արևմտահայերենի կապի մասին:

Սույն աշխատանքի արդիականությունը պայմանավորված է 17-րդ դարի աշխարհաբարի, 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական համակարգի ոչ բավարար ուսումնասիրվածությամբ, քանի որ թեև եղել են համառոտ անդրադարձներ վերոհիշյալ երկերին, սակայն պետք է նշել, որ համակողմանի և ամբողջական ուսումնասիրություն չի կատարվել: Հետևաբար այս երկերի լեզվական քննությունը և տարաբնույթ առանձնահատկությունների վերլուծությունը խիստ արդիական են:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է հնարավորինս ամբողջությամբ և լիարժեք քննել 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական համակարգը և տալ վաղ աշխարհաբարի ընդհանուր բնութագիրը՝ ուրվագծելով դրա և հայերենի երկու լեզվաճյուղերի հետագա զարգացման հիմքերը:

Մեր առջև դրված խնդիրներն են.

ա) քննել 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերը՝ ներկայացնելով դրանց հեղինակներին (թարգմանիչ, մեկնիչ), կառուցվածքը, նպատակները ևն:

բ) Ուսումնասիրել 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական առանձնահատկությունները հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության,

շարահյուսության մակարդակներում՝ կատարելով համապատասխան վերլուծություններ, բերելով վիճակագրական տվյալներ¹:

գ) Պարզել, թե այս երկերի լեզուն գրաբարյան, միջինհայերենյան, բարբառային, «քաղաքացիական» հայերենի ինչպիսի տարրեր է ներառում և ինչպես է կանխատեսում հայերենի հետագա զարգացումը:

դ) Վերոհիշյալ գրքերի լեզվական համակարգված քննությամբ բնութագրել 17-րդ դարի աշխարհաբարը՝ մատնանշելով 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի ունեցած մեծ դերն աշխարհաբարի հետագա կանոնարկման գործում:

ՈՒՍՈՒՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓԱՏՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ:

Ուսումնասիրության փաստական նյութը 17-րդ դարի աշխարհաբար տպագիր երեք գրքերն են՝ «Արհեստի համարողութեան ամբողջ և կարտեայ», «Պարզաբանության հոգենուագ սաղմոսացն Դաթի մարգարէին», «Գանձ չափոյ, կշոյ, թոյ և դրամից բոլոր աշխարհի», դրանց բնորոշ լեզվական իրողություններն ու առանձնահատկությունները: Միաժամանակ անդրադարձել ենք մեր քննությանն առնչվող այլ գրքերի, հոդվածների, որոնք արտացոլված են ատենախոսության համապատասխան էջերում և օգտագործված գրականության ցանկում:

Քննությունը կատարվել է մի քանի մեթոդների զուգակցմամբ՝ նկարագրական, վերլուծական, զուգադրահամեմատական, համադրական, որոնց միջոցով իրագործել ենք մեր առջև դրված խնդիրները՝ ուսումնասիրելով 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերը:

ԱՏԵՆԱՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Մեր ուսումնասիրությունն առաջինն է 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական համակարգի ամբողջական նկարագրի և արժևորման բնագավառում: Հնարավորինս լիարժեք քննել և վերլուծել ենք վերոհիշյալ երկերի հնչյունական, բառագիտական, ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունները՝ գնահատելով դրանց դերն աշխարհաբարի ձևավորման և հետագա նորմավորման կարևոր գործընթացում:

Որպես 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական համա-

¹ Հիմք ընդունելով այն, որ «Արհեստի համարողութեան ամբողջ և կարտեայ», «Գանձ չափոյ, կշոյ, թոյ և դրամից բոլոր աշխարհի» երկերում պատկերավորման, արտահայտչական միջոցներ հիմնականում չեն հանդիպում՝ պայմանավորված դրանց բովանդակությամբ, նպատակադրմամբ և բնույթով, մեր աշխատանքում ոճագիտությանը նվիրված բաժին չենք առանձնացրել: Սակայն «Պարզաբանություն հոգենուագ սաղմոսացն Դաթի մարգարէին» երկն աչքի է ընկնում ոճական տարբեր իրողություններով, որոնք քննել և հրատարակել ենք առանձին հոդվածով (Թ. Պողոսյան, «17-րդ դարի աշխարհաբար առաջին տպագիր գրքերի լեզվի ոճական բնութագիրը», Հայագիտական հանդես, № 4 (38), Երևան, 2017, էջ 23–32), որում համառոտ անդրադարձ ենք կատարել նաև մյուս երկու երկերում հազվադեպ գործածվող ոճական որոշ տարրերի:

կարգված քննություն՝ սույն աշխատանքը կարող է օգտակար լինել թե՛ աշխարհաբարի ուսումնասիրությամբ, թե՛ առհասարակ հայոց լեզվի պատմությամբ, բարբառագիտությամբ զբաղվող բանասերների, մասնագիտական ֆակուլտետների ուսանողների, հայագիտությամբ հետաքրքրվող հանրության համար:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության ամբիոնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, համառոտագրությունների և հապավումների, օգտագործված գրականության ցանկերից, հավելվածներից: Ատենախոսության ծավալը 144 էջ է:

Ներածության մեջ անդրադարձ է կատարվում աշխարհաբարին, նրա ձևավորմանը, բնութագրիչ առանձնահատկություններին, համառոտ ներկայացվում է հարցի ուսումնասիրվածության աստիճանը:

Գլուխ I. 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերը: Այս գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցում ուսումնասիրվում են վերոհիշյալ գրքերից յուրաքանչյուրի կառուցվածքը, նպատակը, հեղինակի (թարգմանիչ, մեկնիչ) վերաբերյալ եղած կարծիքները, երկերին տրված գնահատականները ևն:

Ա. «Արհեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» գիրքը: Աշխարհաբար առաջին գիրքը՝ «Արհեստ համարողութեան ամբողջ և կատարեալ»-ը, տպագրվել է 1675 թ. Մարտելում՝ Ոսկանյան տպարանում: Այն նաև հայերեն առաջին տպագիր մաթեմատիկական գիրքն է, որում ներկայացվում են թվաբանական գործողությունները, տարբեր հաշվարկներ կատարելու եղանակներն ու ձևերը:

Գիրքը նախատեսված էր հայ վաճառականների գործածության համար, շարադրված *աշխարհական ոճով*, որպեսզի բոլորին հասկանալի լինի. «Եւ մանաւանդ զի աշխարհականաւ ոճիւ է շարագրեցեալ առ ի բառնալ զպատճառս ծուլից և պարսաւաբանից, որք եթէ մի անգամ սիրով և ուշադրութեամբ ընթեռնուցուն զսա, զբնասս դժուարութիւնս համարողութեան գերազանցեցեն»²: Այն ոչ թե հայերենի զարգացման նոր փուլի առանձին տարրեր է պարունակում, այլ լեզվական այնպիսի համակարգ է ներկայացնում, որը ո՛չ գրաբար է, ո՛չ միջին հայերեն: Այդ լեզվական համակարգը հաշվի առնելու պարագայում հստակ է, որ աշխարհաբար տպագիր գրքերից առաջինն «Արհեստ համարողութեան ամբողջ և կատարեալ»-ն է:

Բ. «Պարզաբանութիւն հոգեւնուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» գիրքը: Աշխարհաբար հաջորդ գիրքը՝ «Պարզաբանութիւն հոգեւնուագ սաղմոսացն Դաւթի

² Արհեստ համարողութեան ամբողջ և կատարեալ, Մարտել, 1675, Առաջաբանութիւն գրգոյս: 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերից մեջքերումները ներկայացնում ենք բնագրային ուղղագրությամբ, ուղղագրական հնարավոր սխալներն ընդգծել ենք մեկ գծով: Կետադրությունը համապատասխանեցրել ենք մերօրյա կանոններին:

մարգարէին», տպագրվել է 1687 թ. Նահապետ Ազուլեցու տանը գործող տպարանում: Հովհաննես Հուլվը գրքի «*Խրատ և Առ ընթերցողս*» մասում բացատրում է, թե ինչու է ցանկացել սաղմոսների մեկնությունները ներկայացնել աշխարհաբար. «*Բայց նախ գիտելի է, զի զմեկնութիւնս զայս այնու դիւրաւորութեամբ շարադրեցաք մեք աշխարհորէն, զի կարիցեն աշխարհականք ամենեքեան դիւրապէս իմանալ զայն...*»³: Երկն ի սկզբանե ծրագրված է եղել գրել *աշխարհական* և *հասկանալի լեզվով*՝ սաղմոսները և դրանց իմաստը *վայելելու* համար:

Գ. «Գանձ չափոյ, կշռոյ, թոյ և դրամից բոլոր աշխարհի» գիրքը: Ըստ ժամանակագրության՝ աշխարհաբար երրորդ գիրքը՝ «Գանձ չափոյ, կշռոյ, թոյ և դրամից բոլոր աշխարհի»-ն, տպագրվել է 1699 թ. Ամստերդամում՝ Վանանդեցիների տպարանում: Այն նախատեսված էր հայ վաճառականների համար՝ որպես գործնական տեղեկատու: Հեղինակը՝ Ղուկաս Վանանդեցին, ունեցել է առաջադրված խնդիր, նպատակ՝ «*Բայց, ըստ կարի մերում, և ըստ որում ի հարազատ գրեանս եղեալ գրինք, զյետ նոցա երթալով՝ զնոյնս մեք ևս ի յօգուտ մերազնեայ վաճառասէր եղբարցդ արձանացուցուք*»⁴, և գրքի բաժինները ծառայել են դրանց իրագործմանը:

Գլուխ II. Հնչյունական համակարգի և բառապաշարի քննություն: Ատենախոսության այս գլխի երկու ենթագլուխներում քննել ենք 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի հնչյունական համակարգի և բառապաշարի տարբեր առանձնահատկությունները:

Ա. Հնչյունական համակարգի առանձնահատկություններ: Պայթական և պայթաշփական բաղաձայնների փոփոխությունների հիման վրա Ա. Ղարիբյանի առանձնացրած բաղաձայնական համակարգի տեղաշարժերի և բարբառների հնչյունաբանական դասակարգման տեսանկյունից «Արիեստ համարողութեան» երկի բաղաձայնական համակարգը քննելով՝ կարելի է նշել, որ հիմնականը և բնութագրականը ձայնեղների խլացումն է՝ բաղաձայնական համակարգի առաջին տեղաշարժը, որը բնորոշ է Ղարաբաղի, Հադրութի, Շամախու, Մարաղայի, Ուրմիայի, Խոյի, Վանի և այլ բարբառների: «Պարզաբանութիւն»-ում բաղաձայնների փոփոխությունները բազմաբնույթ են: Ձայնեղների խլացման և շնչել խլացման հաճախ հանդիպող օրինակները հիմք են տալիս կարծելու, որ գործ ունենք առավելապես միջին հայերենի, ապա և Պոլսի բարբառի երկաստիճան համակարգերի մի միջանկյալ տարբերակի հետ: «Գանձ» երկում ևս առկա են բաղաձայնների տարաբնույթ փոփոխություններ՝ ձայնեղների խլացում, խուլերի ձայնեղացում, խուլերի շնչեղացում ևն, որոնք համակարգային և ընդգրկուն չեն:

Ձայնավորների շեշտափոխական հնչյունափոխության դրսևորումները ներկայացրել ենք հետգրաբարյան կազմությունների հիման վրա՝ վաղ աշխարհաբարում

³ Պարզաբանութիւն հոգեմտագ սաղմոսացն Դաւթի մարգարէին, Վենէտիկ, 1687, էջ 8:

⁴ **Ղ. Վանանդեցի**, Գանձ չափոյ, կշռոյ, թոյ և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699, էջ 3:

հանդիպող հնչյունական փոփոխությունները տեսանելի դարձնելու նպատակով, ինչպես՝ *է(ե) > ի՝ կիսին համար* (ԱՀ, 96), *է(ե) > ը՝ ցխտ* (Պ, 19) ևն, *ի > ը՝ ըննին հեպ* (ԱՀ, 25), *նգերն* (Պ, 740), *ի > է՝ Փարեզ* (Գ, 10) ևն, *ու > ը՝ բշոյի* (ԱՀ, 49, 87), *պոնկներդ* (Պ, 162) ևն, *ա > է՝ ճեվահիր* (Պ, 100): Գործածվում են նաև ձայնավորների սղմամբ հետգրաբարյան կազմություններ, օրինակ՝ *է(ե)՝ ցրոնահապ* (ԱՀ, 112), *ի՝ մօրկացան* (Պ, 127), *կին* (Գ, 72, 73) ևն, *ու՝ քառասնի* (ԱՀ, 47), *վացնով* (ԱՀ, 108, 111) ևն, *ա՝ ատեյցած* (ԱՀ, 130), *լորել* (Պ, 281) ևն, *օ՝ եթի* (ԱՀ, 132): Հնչյունական համակարգի տարաբնույթ դրսևորումներն ուսումնասիրել ենք՝ առանձնացնելով նաև հետևյալ խմբերը՝ փոխազդեցական հնչյունափոխության դրսևորումներ, *ը* ձայնավորի հավելում, զուգաձևություններ ևն:

Բ. Բառապաշարի քննություն: Հետևելով հայերենագիտության մեջ ընդունված սկզբունքներին և հաշվի առնելով 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի բառապաշարի ընդհանուր առանձնահատկությունները՝ բառապաշարը ներկայացրել ենք ըստ ծագման, հայերենի զարգացման տարբեր փուլերի և լեզվական տարբեր շերտերի, գործածության տարբեր ոլորտների:

1. Բառապաշարի ծագումնաբանական դասակարգում: Ըստ ծագման՝ վերոհիշյալ երկերի բառապաշարում առանձնացրել ենք բնիկ և փոխառյալ բառեր: Մեր քննած երկերում բնիկ բառերը բառապաշարի հիմքն են կազմում, ինչպես՝ *դասն* (ԱՀ, 1), *մարդ* (Պ, 11), *գին* (Գ, 35) ևն: Փոխառությունները դասակարգել ենք ըստ հետևյալ խմբերի՝ ա) *միջին հայերենի շրջանում փոխառված բառեր (միջինհայերենյան փոխառություններ)*, բ) *վաղաշխարհաբարյան (նոր) փոխառություններ:*

ա) **Միջին հայերենի շրջանում փոխառված բառեր:** Այս խմբում ընդգրկել ենք այն բառերը, որոնք փոխառվել են 12–16-րդ դդ. և արձանագրված են այդ շրջանին վերաբերող բառարաններում: Դրանք ներկայացրել ենք ըստ իմաստային-թեմատիկ մի քանի խմբերի, ինչպես՝ ա) *չափի, կշռի և դրամական միավորներ*, բ) *վաճառականության ոլորտում գործածվող բառեր*, գ) *ռազմական գործ, թշնամանք*, դ) *բուսական աշխարհ:*

բ) **Վաղաշխարհաբարյան (նոր) փոխառություններ:** Մեր քննած երկերի բառապաշարում բազմաթիվ են այնպիսի փոխառությունները, որոնք հայերենի զարգացման նախորդ փուլերում չեն հանդիպում: Հնարավոր է, որ 17-րդ դարում են մուտք գործել հայերեն և սկսել լայնորեն գործածվել, հետևաբար դրանք կարելի է վաղաշխարհաբարյան փոխառություններ համարել: «Արիեստ համարողութեան» և «Գանձ» երկերում գործածվող մի շարք նման փոխառություններ դարձյալ դասակարգել ենք ըստ իմաստային-թեմատիկ հետևյալ երկու խմբերի՝ ա) *չափի, կշռի և դրամական միավորներ, թվեր*, բ) *վաճառականության ոլորտում գործածվող բառեր:* «Պարզաբանութիւն» գրքում կիրառված վաղաշխարհաբարյան (նոր) փոխառությունների քանակը մեծ չէ (12):

Քննվող երկերում գործածվող բոլոր փոխառություններից համեմատաբար մեծաթիվ են պարսկական, արաբական փոխառությունները, օրինակ՝ *սարմիայ* (ԱՀ, 126) // *սարմա* (Գ, 76) // *սարմայ* (Գ, 77) – պրսկ. sār-maye (դրամագլուխ), *չուսպ* (Պ, 81)

- պրակ. ճիւտ - 1. արագ: 2. Արագորեն, *բանդար* (Գ, 35) - արաբ. bandar՝ առևտրական նավահանգիստ (վաճառաշահ քաղաք) ևն:

2. Բառապաշարի դասակարգում ըստ հայերենի զարգացման տարբեր փուլերի և լեզվական տարբեր շերտերի: Ըստ հայերենի զարգացման տարբեր փուլերի և լեզվական տարբեր շերտերի՝ 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի բառապաշարում կարելի է առանձնացնել գրաբարյան, միջին հայերեն, բարբառային, նորակազմ (նորահայտ) բառեր: Արձանագրել ենք նաև նորակազմ դարձվածքներ, որոնք ևս ներառել ենք բառապաշարի քննության այս բաժնում:

Քննվող երկերում հանդիպում են մի շարք գրաբարյան բառեր, ինչպես՝ *դիրապէս* (ԱՀ, Առաջաբանութիւն գրգոյս), *հանապազ* (Գ, 70), *պարարակ* (Պ, 265) ևն: Միջին հայերեն բառաշերտի բառերը դասակարգել ենք՝ հիմք ընդունելով դրանց խոսքիմասային պատկանելությունը: Վերոհիշյալ երկերի բառապաշարում գործածվում են մեծ թվով բարբառային բառեր, որոնք ներկայացրել ենք ըստ խոսքիմասային պատկանելության, իսկ «Արիեստ համարողութեան» և «Գանձ» երկերի բառապաշարում հանդիպող մի շարք բարբառային բառեր՝ նաև ըստ իմաստային-թեմատիկ հետևյալ խմբերի՝ ա) *վաճառականության ոլորտում գործածվող բառեր*, բ) *չափի և դրամական միավորներ*: Բառարանային տվյալները վկայում են, որ 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի բառապաշարում բարբառային բառերի կիրառության տեսանկյունից առավել մեծ է արևելյան բարբառախմբի ազդեցությունը: Քննվող գրքերի բառապաշարում արձանագրել ենք 29 նորակազմ (նորահայտ) բառեր, ինչպես՝ ածանցավոր՝ *Հոռմաստան* (ԱՀ, 144), *համահանգիտութիւն* (Պ, 595), *բազմացնելի* (Գ, 67) ևն, բարդ՝ *ցորնահատ* (ԱՀ, 112), *վախալեզու* (Պ, 265), *փոքրակեր* (Գ, 51) ևն, բարդ ածանցավոր՝ *լուսնանորութիւն* (Պ, 439), *առաքինագործութիւն* (Պ, 471), *հնարախօսութիւն* (Պ, 644) ևն: Գերակշռում են ածանցավոր և բարդ կազմությունները: Դարձվածային միավորներ առավել հաճախ հանդիպում են «Պարզաբանութիւն» երկում, որտեղ նորակազմ դարձվածքները 11-ն են, ինչպես՝ *անհարկիք անել* (Պ, 154) – անարգել, արհամարհել, *տնազատել անել* (Պ, 182, 465), *տնազ շինել* (Պ, 317) – ծաղրի առարկա դարձնել ևն:

3. Բառապաշարի գործառական դասակարգում (մաթեմատիկական տերմիններ): «Արիեստ համարողութեան», «Գանձ» գրքերի բովանդակային ընդհանրությունը, աշխարհաբարի ձևավորման ակունքներում կանգնած լինելը, մեծ թվով մաթեմատիկական տերմինների առկայությունը հնարավորություն են տալիս համեմատական քննությամբ պարզելու հայերենի մաթեմատիկական տերմինների, տերմինային բառերի բնույթը 17-րդ դարում: Այս երկերում հանդիպող ուշագրավ մաթեմատիկական տերմինները և տերմինային բառերը դասակարգել ենք ըստ հետևյալ խմբերի՝ ա) *գումարում*, բ) *հանում*, գ) *բազմապատկում*, դ) *բաժանում*, ե) *թվաբանություն*, *թվեր*, *կանոններ*, իսկ դրանց ամբողջական ցանկը ներկայացրել ենք հավելված 3-ում: Մի շարք տերմիններ և տերմինային բառեր գործածական են այսօր ևս, օրինակ՝ *անհասարություն* (ԱՀ, 17), *փոքր թիվ* (Գ, 65), *բաժանելի* (Գ, 66) ևն:

4. Բառային տարբերակներ: Բառապաշարի քննության ընթացքում հանդիպում են բառային տարբերակներ, որոնք վկայված չեն հայերենի բառարաններում, օրինակ՝ *ողարկել* (Պ, 77) – ուղարկել, *պոզպահարել* (Պ, 112) – պոզահարել, *կեսակես* (Գ, 55) – կես ի կես, կետուկես ևն: Հայերենի տարբեր բառարաններում վկայված բառային տարբերակները ևս դրսևորում են գործածության որոշ առանձնահատկություններ, ինչպես՝ *մին-մը, մըն, լինել-լլլալ, էս, էն-այս, այն, էլ-այլ, վերայ-վրայ*: Այս տարբերակների գործածության տեսանկյունից առավել զգալի է արևելյան բարբառների ազդեցությունը: «Պարզաբանութիւն» երկում գերակշռում են ոչ թե բարբառային, այլ գրաբարյան ձևերը՝ *մէկ, այս, այն, այլ*:

Գլուխ III. Ձևաբանական համակարգի քննություն: Այս գլխի հինգ ենթագլուխներում քննել ենք ձևաբանական համակարգի յուրահատկությունները:

Ա. Հոլովակազմություն: Հաշվի առնելով քննվող երկերի լեզվական համակարգում հանդիպող գրաբարյան և ոչ գրաբարյան հոլովածները, հոլովների դրսևորած յուրահատկությունները, հին և նոր տարաբնույթ իրողությունները՝ առանձնացրել ենք տարբեր հոլովածների *զուտ գրաբարյան, ընդհանուր, նոր (հետգրաբարյան)* խմբեր: *Չուտ գրաբարյան* հոլովածների խմբում միավորել ենք միայն գրաբարում գործածվող ձևերը, ինչպես՝ *վաճառականաց* (ԱՀ, 145), *սրբիւ* (Պ, 19), *հրամանաւ* (Գ, 44) ևն: *Ընդհանուր* ենք անվանել այն հոլովածները, որոնք կիրառվել են գրաբարում և փոխանցվել հայոց լեզվի զարգացման հետագա փուլերին, օրինակ՝ *խաչի* (ԱՀ, 26), *ընթերցմամբ* (Պ, 6), *կերակրով* (Գ, 51) ևն: *Նոր (հետգրաբարյան)* ենք անվանել այն հոլովածները, որոնք գրաբարին բնորոշ չեն եղել և ի հայտ են եկել հայերենի զարգացման հետագա ընթացքում, ինչպես՝ *գերօներին* (ԱՀ, 89), *իրատունքով* (Պ, 515), *քաշումն* (Գ, 32) ևն: Հոլովների, հոլովակազմության առանձնահատկությունները ներկայացված են նաև համապատասխան վիճակագրական աղյուսակներում:

Բ. Հոգնակիակազմություն: 17-րդ դարի աշխարհաբար տպագիր երկերում գործածվում են հայերենի զարգացման տարբեր փուլերին և բարբառներին հատուկ հոգնակերտներ: «Արիեստ համարողութեան» երկում կիրառվում են *-եր, -ներ, -ք* հոգնակերտները, գերակշռում են *-եր-ը, -ներ-ը*, ինչպես՝ *շարերն* (ԱՀ, 16), *արապներն* (ԱՀ, 2), *թումաններն* (ԱՀ, 90) ևն: «Պարզաբանութիւն»-ում հոգնակիակազմությունն առավել բազմաձև է, հանդիպում են նաև այլ հոգնակերտներ, ինչպես՝ *-անք, -ինք, -ունք, -իկ, -այք* ևն: Գերակշռում է գրաբարյան *-ք* հոգնակերտը, օրինակ՝ *թագաւորք* (Պ, 19), *երևելիք և աներևոյթք* (Պ, 154) ևն: Թեև *-եր, -ներ* հոգնակերտներով ձևերի կիրառությունը զիջում է գրաբարյան ձևերի գործածությանը, սակայն դրանք ևս հաճախադեպ են, ինչպես՝ *ջրերն* (Պ, 152), *սրամներն* (Պ, 22), *լեզուներն* (Պ, 266) ևն: «Գանձ»-ում ևս հոգնակիակազմությունը բազմաբնույթ չէ, ինչպես «Արիեստ համարողութեան» երկում. գերազանցում է *-ք* հոգնակերտը, օրինակ՝ *սիրելիք* (Գ, 5), *պապուրելիք* (Գ, 5), *մարգարէք* (Գ, 5) ևն, *-եր* և *-ներ* հոգնակերտներով կազմություններ հազվադեպ են գործածվում, ինչպես՝ *բաներ* (Գ, 54), *ղուշերի* (Գ, 51), *երկրների* (Գ, 33): Հանդիպում են նաև հետևյալ հոգնակերտ մասնիկները՝ *-անի, -եանք,*

-ունք, -իկ:

Գ. Առկայացման քերականական կարգ և հոդերի գործածություն:

Որոշյալություն արտահայտելու համար 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական համակարգում գործածվում է ն հոդը: Շարունակվում է գրաբարյան *զ* նախդրի կիրառությունը: Այն ոչ միայն առանձին է հանդիպում, այլև ն հոդի հետ, ինչպես՝ *զմէկն* (ԱՀ, 61), *զանձն* (Պ, 508), *զԿարարինէն* (Գ, 4) են: *Անորոշություն* արտահայտելու համար հիմնականում *մին* // *մէկ* թվականի զուգորդմամբ գործածվում է *մի* թվականից ծագած անորոշ *մի* դերանունը, ինչպես՝ *մին երկար թիւ մի* (ԱՀ, 8), *մէկ գործողութեան նշան մի* (Պ, 270) են, որը «Գանձ» երկում չի կիրառվում: Հանդիպում են *ս ստացական հոդի* գործածություններ, օրինակ՝ «....*մէկն կուպահենք ի մտքերք...*» (ԱՀ, 29), «....*այս գրքումը ինչոր գրեցաւ վասն բաշից....*» (Գ, 53) են: *Ս* հոդը ոչ հաճախ հանդիպում է նաև *ցուցականության* գործառույթով՝ կիրառվելով *այս* ցուցական դերանվան հետ, օրինակ՝ «....*թէ որ զայս թիւք բաժանենք բազմացնող թվովն....*» (ԱՀ, 50), «....*այս երեքի կանոնը միշտ այս կարգ թվոց կու պահէ*» (Գ, 68) են: «Պարզաբանութիւն»-ում ցուցականության գործառույթով երբեմն հանդիպում է նաև *դ* հոդը, իսկ *ս* հոդը՝ նաև *դիմորոշության* գործառույթով:

Դ. Խոնարհման համակարգի առանձնահատկություններ:

Խոնարհման համակարգի քննությունից առաջ անդրադարձել ենք դերբայների գործածությանը՝ նպատակ ունենալով պարզելու դրանց հիմնական առանձնահատկությունները աշխարհաբարի ձևավորման վաղ փուլում: 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերում հայերենի դերբայական համակարգն արտահայտվել է գրեթե ամբողջությամբ՝ դրսևորելով այս կամ այն տարբերությունը: Չի հանդիպում միայն համակատար դերբայը:

Խոնարհման համակարգը քննել ենք՝ հենվելով հետևյալ բնութագրական առանձնահատկությունների վրա՝ ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի կազմություն, *-մք* և *-նք*, *-է* և *-ի* վերջավորություններ, օժանդակ բայի *է*, *ա* (*այ*) ձևեր, անցյալ կատարյալի կազմություն, *-եր*, *-ել* վերջավորություններով վաղակատար ձևաբայով, հարակատար, անցյալ դերբայներով ժամանակաձևեր, ապառնի ժամանակ, պիտի + անորոշ դերբայ, պիտի + խոնարհված բայ, պիտի + հարակա-տար դերբայ կապակցություններ, հրամայական եղանակի դրսևորման առանձնահատկություններ, *անել* բայից և *առնեն* բայի *արար* հիմքից կազմված ձևեր, ժխտական խոնարհման առանձնահատկություններ, կրավորականի կազմության *վ* ածանց, խոնարհման համակարգի անկանոնություններ: Քննության ընթացքում ներկայացվել են համապատասխան աղյուսակներ:

Ե. Ձևաբանական այլ իրողություններ:

«Արիեստ համարողութեան» և «Գանձ» երկերում ածականներն առանձնապես հաճախադեպ չեն՝ ի տարբերություն «Պարզաբանութիւն» երկի: Ընդգրկում է ածականների գրաբարյան շերտը, ինչպես՝ *զանազան փեղ* (ԱՀ, 2), *անճառելի և անպարմելի բարութիւնդ* (Պ, 818), *մեծագանձ վաճառարեղի* (Գ, 11) են: Հանդիպում են նաև ածականներ, որոնք վկայված են միջին հայերենի, աշխարհաբարի բառարաններում կամ նորակազմություններ են, օրինակ՝

սաղ թվի (ԱՀ, 5), պզրիկ թիւ (ԱՀ, 17), վարալեզու մարդկանց (Պ, 265), սպանիօլն՝ փոքրակեր (Գ, 51) ևն: Ածականի բաղդատական աստիճանի կազմութունը հիմնականում գրաբարյան է, գերադրականինը՝ հետգրաբարյան:

Քննվող երկերում թվականները, գրաբարյան հատկանիշներից բացի, բնութագրվում են նաև հետագա զարգացման որոշ իրողություններով: Գործածվում են դերանունների տարբեր ձևեր՝ գրաբարյան, միջինհայերենյան, բարբառային, աշխարհաբարյան: Մակբայների համակարգը բազմաբնույթ է. կիրառվում են մեր լեզվի զարգացման տարբեր փուլերին բնորոշ մակբայներ, ինչպես՝ գրաբարյան՝ *ասր և անդ* (Պ, 14), *յերկրէյերկիր* (Պ, 548), *հանապազ* (Գ, 53) ևն, միջինհայերենյան՝ *էստում* (ԱՀ, 71), *էսկից* (ԱՀ, 13, 88 ևն), *էստի* (Գ, 60) ևն: *Աստի* (Պ, 804, 805, Գ, 57 ևն) մակբայն ընդհանուր է գրաբարի, միջին հայերենի և արևմտահայերենի, մի խումբ մակբայներ՝ գրաբարի, միջին հայերենի և աշխարհաբարի համար, օրինակ՝ *երբեմն* (Պ, 9), *անդադար* (Պ, 410), *մօտ* (Պ, 710) ևն:

Կապերը և շաղկապները որևէ առանձնահատկությամբ չեն բնութագրվում: Հանդիպում են և՛ նախադրություններ, և՛ ետադրություններ: Ձայնարկություններ, վերաբերականներ հազվադեպ են գործածվում և որևէ տարբերակիչ հատկանիշով աչքի չեն ընկնում:

Գլուխ IV. Շարահյուսական համակարգի քննություն: Շարահյուսական համակարգը ներկայացրել ենք առավել բնութագրական առանձնահատկությունների հիման վրա:

Ա. Շարահյուսական կապակցության միջոցներ: Քննվող երկերում գործածվում են շարահյուսական կապակցության տարբեր միջոցներ՝ ձևությային կամ քերականական, բառային միջոցներ, շարադասություն և հնչերանգ: Ձևությային կամ քերականական որոշ միջոցներ՝ հոլովման, խոնարհման համակարգի վերջավորություններ, հոգնակերտներ, հայերենի զարգացման ընթացքում դեռևս պիտի պարզեցվեին և հստակեցվեին:

Բ. Շարահյուսական կապակցության եղանակներ: Համաձայնություն գործում է ենթակայի և ստորոգյալի, բացահայտչի և բացահայտյալի միջև, ինչպես բնորոշ է գրաբարին, միջին հայերենին, նաև աշխարհաբարին: Որոշիչը և որոշյալը հիմնականում կապակցվում են առդրությամբ, հատկացուցիչը և հատկացյալը՝ խնդրառությամբ՝ բացառությամբ որոշ գրաբարյան գործածությունների: Հանդիպում են առդրական, ուժեղ և թույլ խնդրառությամբ տարբեր կապակցություններ: Շարահարությունը և զոդումը բարդ նախադասություններում հիմնականում միասին են գործածվում:

Գ. Նախադասության տեսակներ: 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի շարահյուսական համակարգում երկկազմ նախադասություններ հաճախ են կիրառվում, երբեմն հանդիպում են նաև միակազմ նախադասություններ (դիմավոր, անդեմ), ինչպես՝ «Կորարած թիվն ինչպէս պիտի հանած» (ԱՀ, 86), «...ա՛հ, ե՛րբ կու լինի, որ...» (Պ, 216), «Հաշթարխանու մինչև ի Մօսկօվն մին փուտին 1000 դիան քիրայ կառուն» (Գ, 37), «Քեզ օրինակ» (Գ, 76) ևն: Հիմնականում գործածվում են պարզ

ընդարձակ նախադասություններ, պարզ համառոտ նախադասություններ այս երկերի շարահյուսությանը բնորոշ չեն: Լայն կիրառություն ունեն գեղջված ենթակայով թերի նախադասությունները, ինչպես՝ «Իսկ թե ուզենք հանելով փորձել, պիտինք տեսնել առաջ...» (ԱՀ, 15), «Առաջին համարքով երկրորդն բաժանենք» (Գ, 69) ևն: Ժխտական նախադասություններից հիմնականում հանդիպում են ընդհանրական ժխտումով նախադասություններ, օրինակ՝ «Քայց թէ էս աղիսակս ձեռաց չի լինի...» (ԱՀ, 33), «Այսինքն, գերէ իմ թշնամեաց բերանումն ամենևին ճշմարիտ խօսք չկայ...» (Պ, 28) ևն: Պայմանավորված քննվող երկերի բովանդակությամբ՝ առավել կամ պակաս հաճախականությամբ գործածվում են նախադասությունների բոլոր տեսակները՝ ըստ խոսքի նպատակադրման և հնչեղանգի: Բարդ նախադասությունների լայն գործածությունը կարելի է բնութագրական իրողություն համարել «Արիեստ համարողութեն» և «Պարզաբանութին» երկերի շարահյուսության համար:

Դ. Պարզ նախադասություն: Այստեղ քննել ենք նախադասության գլխավոր և երկրորդական անդամների կիրառության տարաբնույթ առանձնահատկությունները՝ ենթակայի և ստորոգյալի արտահայտությունը, շարադասությունը, համաձայնությունը, որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունները, խնդիրները, պարագաները: Դրանք պահպանում են գրաբարյան որոշ հատկանիշներ, միաժամանակ բնութագրվում աշխարհաբարի շարահյուսությանը հատուկ մի շարք նոր իրողություններով:

Ե. Բարդ նախադասություն: 17-րդ դարի աշխարհաբար տպագիր երկերում հաճախադեպ են զոդվածական կապակցությամբ բարդ համադասական և ստորադասական նախադասությունները: Ճարահարական կապակցությամբ բարդ նախադասություններ հազվադեպ են հանդիպում:

Տարբեր հաճախականությամբ գործածվում են ենթակա, ստորոգելիական երկրորդական նախադասությամբ, գլխավոր նախադասության ենթակային կամ գոյականով արտահայտված որևէ անդամի լրացնող, գլխավոր նախադասության ստորոգյալին կամ բայով արտահայտված այլ անդամի լրացնող երկրորդական նախադասությամբ բարդ ստորադասական և բազմաբաղադրիչ բարդ նախադասություններ: Լայն կիրառություն ունեն ուղիղ խնդիր երկրորդական, պարագայական երկրորդական նախադասությունները, ինչպես՝ «...կուզենք իմանամք, թե 33 գագ կտան կամ 33 դիպր իքմինս երեք մտոչի և 36 սրակովն քանի կանե...» (ԱՀ, 92-93), «Այսինքն, թե որ ես մարդի նման քաղցենամ, չեմ գար զքեզ աղաչեր...» (Պ, 256), «...և կամ ամենայն թիւ իւր կպած թվոյն հետ բազմացո՞, որ մնան 3 գլխաւոր համարքն...» (Գ, 72): Բազմաբաղադրիչ կամ բազմաբարդ նախադասությունները հատուկ են հատկապես «Պարզաբանութին» երկին:

Եզրակացություններ: 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական առանձնահատկությունների քննությունը հետևյալ եզրակացություններն անելու հնարավորություն է տալիս.

Ա. 17-րդ դարը կարևոր շրջափուլ է հայ հոգևոր վերելքի, այդ թվում՝ դպրության, գիտության, տպագրության զարգացման համար: Հայոց լեզվի պատմության մեջ ևս այս դարը զարգացման նոր շրջան է: Աշխարհաբար առաջին տպագիր գրքերը՝ «Արհեստք համարողութեան ամբողջ և կարարեալ» (Մարսել, 1675), «Պարզաբանութիւն հոգեւնուագ սաղմուսացն Դասթի մարգարէին» (Վենետիկ, 1687), «Գանձ չափոյ, կշռոյ, թոյ և դրամից բոլոր աշխարհի» (Ամստերդամ, 1699), արտացոլում են 17-րդ դարի հայերենի օրինաչափությունները մասնավորապես նրանով, որ հեղինակներն իրենց գիտական, ուսումնական նպատակներն իրականացնելու համար ձգտել են գործածել ժողովրդի լայն շերտերին հասկանալի լեզու՝ այդ կերպ դառնալով նաև աշխարհաբարի տարածողները: Այս իմաստով վերոնշյալ գրքերի տպագրությունն աշխարհաբարի պաշտոնականացման առաջին լուրջ քայլն է: Այդպիսով՝ 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերն անփոխարինելի արժեք ունեն հայ տպագրության և հայոց լեզվի պատմության համար: Դրանց լեզվական համակարգն իր չափով ծառայում է որպես հիմնասյուն աշխարհաբարի մշակման և ամրապնդման գործընթացում:

Բ. Սույն երկերում գերակշռող մեծամասնությամբ արտացոլված է հայերենի պայթյալական և պայթաշփական բաղաձայնների՝ գրաբարյան շրջանի եռաստիճան համակարգը: Միաժամանակ հանդիպում են գրաբարից տարբերվող հնչյունական երևույթներ, օրինակ՝ բաղաձայնների և ձայնավորների տարատեսակ փոփոխություններ, փոխազդեցական հնչյունափոխության դրսևորումներ ևն: Դրանք երեք գրքերում բաշխված են անհամարժեք և վերջնականորեն չկանոնավորված, այսինքն՝ լիովին համապատասխանում են վաղ աշխարհաբարի հնչյունական բազմազանության բնութագրին: Եթե անտեսենք տպագրական հնարավոր վրիպակներն ու սխալագրությունները, ապա երկերում առկա հնչյունական մի շարք երևույթներ, ինչպես՝ ձայնեղների խլացում (*անդունսք*, *եղունկներ* ևն), խուլերի ձայնեղացում (*հսաք*, *խրիդ* ևն), խուլերի շնչեղացում (*լաթինաց*, *կօպեք* ևն), զուգաձևություններ (*երեկուն // երիկուն*, *տաքտեղ // տաքդեղ* ևն) ևն, պայմանավորված են ժամանակի խոսակցական լեզվավիճակի, բարբառների ազդեցությամբ:

Գ. 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի բազմաշերտ բառապաշարը կապող օղակի դեր ունի հայերենի զարգացման նախորդ փուլերի և հետագա շրջանի բառապաշարի միջև: Գրաբարյան, միջինհայերենյան բառերի լայն գործածությանը զուգահեռ վաղ աշխարհաբարը համալրվում էր տարբեր լեզուներից կատարվող փոխառություններով, ինչպես նաև բարբառային ծագման, նորակազմ մի շարք բառերով:

Փոխառությունների խմբում առավել մեծաթիվ են պարսկական՝ 66 (*թուման*, *չուսս* ևն) և արաբական՝ 60 (*բանդար*, *դադար* ևն) փոխառությունները:

Բարբառային բառերի մեջ գործածության տեսանկյունից գերակշռում են առավելապես արևելյան բարբառների բառերը (*իքմին // ինքնմին*, *փոթթթել* ևն): Սա վկայում է քննվող գրքերի բառապաշարում արևելյան բարբառների ազդեցության մասին:

Արձանագրել ենք 29 նորակազմ՝ այլ աղբյուրներում չվկայված բառեր (համահանգիրություն, փոքրակեր են), 11 դարձվածքներ (գլխակոր անել, տնազպտեղ դառնալ են), նաև բառային (հնչյունական, բառակազմական) 11 տարբերակներ (ողարկել // ուղարկել, սրտեհանց // սրտանց են): Նորակազմ բառերի մեջ գերակշռում են ածանցավոր և բարդ կազմությունները (անուժանալ, որսարար, վազալեզու են): Սա ցույց է տալիս վաղ աշխարհաբարում ածանցման և բառաբարդման կենսունակությունը: Նորաստեղծ միավորների մի մասն է հետագայում կիրառություն ստացել՝ գործածվելով բարբառներում կամ գրական արևելահայերենում ու արևմտահայերենում (առաքինագործություն, խղճմտանքախար են): Բառային շատ միավորներ այս գրքերի բառապաշարի շրջանակից դուրս չեն եկել (համայափորենականություն, վազկանություն են):

«Արհեստ համարողութան» և «Գանձ» գրքերում, պայմանավորված դրանց բովանդակությամբ, գործածվում են մեծաթիվ մաթեմատիկական տերմիններ և տերմինային բառեր (բազմացնել // բազմապատկել // ռաղամ անել, կտրափել // բաժանել են): Դրանք վկայում են 17-րդ դարում հայերենի մաթեմատիկական տերմինահամակարգի մշակման և կատարելագործման մասին: Մի շարք տերմիններ կիրառվում են առ այսօր (բաժանելի, ամբողջ թիվ են):

Դ. 17-րդ դարի աշխարհաբար տպագիր երկերի հոլովման համակարգն աչքի է ընկնում գրաբարյան, հայերենի զարգացման բոլոր փուլերի համար ընդհանուր, նոր՝ աշխարհաբարյան հոլովածների համատեղ գործածություններով և ունի հետևյալ ընդհանուր բնութագիրը.

1. ուղղական և հայցական հոլովների նույնացման երևույթը հանդիպում է «Արհեստ համարողութան» և «Պարզաբանություն» երկերում («ժողովել անհատընեն», «կտրոցակիզե զփո թշնամիքն», «առտամենոն ջարդես և կտրափես» են):

2. Սեռական-տրական, գործիական, ներգոյական հոլովածների ընդհանուր բաշխվածությունը ներկայացնում ենք աղյուսակի տեսքով: Աղյուսակում գրաբարյան, ընդհանուր և նոր հոլովածների կիրառությունները տրված են տոկոսային հարաբերակցությամբ: Ներկայացված են երեք գրքերի տվյալները.

Աղյուսակ 1

հոլովներ	գրաբարյան ձևեր	ընդհանուր ձևեր	նոր ձևեր	
սեռական-տրական	45%	37%	18%	
գործիական	24%	48%	28%	
ներգոյական	ներգոյական հոլովի իմաստ արտահայտող գրաբարյան	-	ներգոյական հոլովի -ում վերջավորությամբ ձևեր՝ 73%	ներգոյական հոլովի իմաստ արտահատող կապակցություններ՝ սեռական-

Աղյուսակ 1-ի շարունակություն

	կազմություններ՝ 17,5%		տրական հոլով + մէջ՝ 9,5%
--	--------------------------	--	-----------------------------

3. Բացառական հոլովը կազմվում է է թեքությով (*կողմէն, բերանէն* ևն), որը փոխանցվել է արևմտահայերենին: Յ թեքությով կազմությունները հատուկնետ են (*էսկից, չուխից* ևն):

4. Մի շարք ձևերի ընդհանրացմամբ ուրվագծվում է աշխարհաբարի հոլովման համակարգը: Նկատի ունենք հատկապես *ի* հոլովման, բացառական հոլովի աննախդիր կազմությունների, գործիական հոլովի *ով* հոլովակերտի առավել տարածումը, ներգոյականի կազմության հիմնական սկզբունքը՝ *-ում* վերջավորությամբ: Նշվածներն աշխարհաբարի հոլովման համակարգի կարևոր տարրերից են:

Ե. Հոգնակիակազմությունը ևս, աստիճանաբար ձերբազատվելով բազմաձևությունից, կանոնավորվում է: «Արիեստ համարողութեան» երկում նկատելի են *-եր, -ներ* մասնիկների կայունացումը և գերակշռումը՝ գրաբարյան, հետգրաբարյան հոգնակերտների 14% և 86% հարաբերակցությամբ: «Պարզաբանութիւն»-ում և «Գանձ»-ում, հակառակը, գերակշռում են գրաբարյան հոգնակերտները՝ 72% և 28%, 97% և 3% հարաբերակցությամբ: Երեք գրքերում հոգնակիակազմության ընդհանուր պատկերը հետևյալն է՝ 70% և 30%՝ հօգուտ գրաբարյան ձևերի:

Զ. Հոդերի համակարգն ընդհանուր առմամբ հակված է դեպի աշխարհաբարը: Որոշյալությունն արտահայտվում է հիմնականում *ն* հոդով: *Մի* թվականից ծագած անորոշ *մի* դերանունը հաճախ կիրառվում է *մին* // *մէկ* թվականի զուգորդմամբ (*մին երկար թիւ մի, մէկ գործողութեան նշան մի* ևն): *Ս, դ* հոդերը հանդիպում են նաև ստացականության, ոչ հաճախ՝ ցուցականության, *ս* հոդը հազվադեպ՝ դիմորոշության գործառույթներով:

Է. Քննվող երկերի խոնարհման համակարգը, գրաբարյան ձևերից բացի, պարունակում է հետգրաբարյան և աշխարհաբարյան մի շարք տարրեր, որոնք բնորոշ են թե՛ արևելյան, թե՛ արևմտյան բարբառներին (միասին կամ առանձին): Այդ իրողությունների մեծ մասն աստիճանաբար ծավալում է ստանում երկու գրական լեզուներում:

1. Դերբայներից գործածության մեծ հաճախականություն ունեն անորոշ, հարակատար, ենթակայական, անցյալ, վաղակատար (*-ել / -եր՝ մնացել, ծներ, դրեր* ևն), *-ոց* վերջավորությամբ ապառնի (*ծնանելոց էին, ազապելոց էին* ևն), ժխտական դերբայները (*չի մնաք, չեմ երկնեիր* ևն), հազվադեպ են գործածվում անկատար (*է գտվում, չէ կարում*), *-ու* վերջավորությամբ ապառնի (*սուր չէ դառնալու*), ապառնի երկրորդ (*բարդելիք*) դերբայները: Չի հանդիպում համակատար դերբայը:

2. Ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը գերազանցապես կազմվում են միջին հայերենին, արևմտյան բարբառներին, գրական արևմտահայերենին բնորոշ *կու (կը, կ)* եղանակիչով:

3. «Արհեստ համարողութեան» և «Պարզաբանութիւն» երկերի խոնարհման համակարգում կիրառվում է եւմ օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմքի է ձևը, որը բնորոշ է գրաբարին, միջին հայերենին, արևմտյան բարբառներին: Արևելյան բարբառներին հատուկ ա-ն (այ) հանդիպում է միայն «Գանձ» երկում (դանայ այ, կես այ նն):

4. Դիմավոր բայերի հոգնակի առաջին դեմքի գրաբարյան -մք (բազմապատկեմք, հաստատիմք նն), բարբառային-ժողովրդախոսակցական, հետագայում՝ աշխարհաբարյան -նք վերջավորությունները (բաժանիմք, կու տեսնուկք նն) ունեն գործածության հետևյալ հարաբերակցությունը՝ -մք՝ 82%, -նք՝ 18%՝ հոգուտ գրաբարյան ձևերի: Սահմանական եղանակի ներկա և ըղձական եղանակի ապառնի ժամանակաձևերով խոնարհված բայերը եզակի թվի երրորդ դեմքում ունեն ներկայումս արևելյան բարբառներին և արևելահայերենին բնորոշ -ի (կու դրվի, սկսանի նն), արևմտահայերենին հատուկ -է (կուտուցանէ, քաշէ նն) դիմային վերջավորությունները, որոնց հարաբերակցությունը հուշում է արևմտյան բարբառների ազդեցության մասին՝ -է՝ 54%, -ի՝ 46%:

5. «Արհեստ համարողութեան» և «Պարզաբանութիւն» երկերին հատուկ է միջին հայերենում գործածվող և արևմտյան մի շարք բարբառների բնորոշ -եր վերջավորությամբ վաղակատար ձևաբայով համապատասխան ժամանակաձևերի կիրառությունը (գրեր են, վիզն են դրեր նն): Գործածվում են նաև հարակատար դերբայով ժամանակաձևեր (կտրադած են, գոված ես նն), որոնք հետագայում առավելապես բնորոշ դարձան արևմտահայերենին:

6. Պիտի կամ պիտի-ի դիմավոր ձև + անորոշ դերբայ (պիտի բանացնել, պիտինք յետ դառնալ նն) կապակցությունները ցույց են տալիս արևելյան բարբառների ազդեցությունը: «Արհեստ համարողութեան» երկում հանդիպող «պիտի + հարակատար դերբայ» (պիտի տեղավորած, պիտի քաշած նն) կապակցություններն արևելյան բարբառներին, մասնավորապես Ղարաբաղի բարբառին առնչվող իրողություններ են:

7. «Արհեստ համարողութեան» երկում հրամայական եղանակի բայաձևեր գրեթե չեն գործածվում, իսկ «Գանձ-ում սակավ հանդիպող օրինակները գրաբարյան ձևեր են (լե՛ր, զիտես՛ նն): Հրամայական եղանակի կազմությունը կանոնավորված է «Պարզաբանություն» երկում, որում ընդհանրաձևում են եզակիի -ի՛ր, -է՛, հոգնակիի -է՛ք վերջավորությունները (դադարի՛ր, համբերէ՛, ուրախացէ՛ք նն): Նույն երկում բուն հրամայականի եզակիի -է՛, արգելական հրամայականի եզակիի -ր (պահէ՛, մի՛ աներ նն) վերջավորությունները վկայում են արևմտյան բարբառների ազդեցության մասին:

8. «Արհեստ համարողութեան» և «Պարզաբանութիւն» երկերում կու-ով (կը, կ) կազմված ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի ժխտական խոնարհման օրինաչափությունը՝ չ ժխտական մասնիկով օժանդակ բայ և -ր վերջավորությամբ դերբայ (չի կարեր, չի մտանէր նն), դարձյալ վկայում է արևմտյան բարբառների ազդեցության մասին:

Ը. Քննվող երկերում աշխարհաբարի ձևաբանական համակարգն ամրակայվում է ածականի գերադրական աստիճանի կազմությամբ, թվականների, դերանունների, մակբայների որոշ բարբառային, հետգրաբարյան ձևերի գործածությամբ: Ուշագրավ են կապերի՝ հողով կիրառությունը (*թվի րականն, խագի երևն* են), *զերա* փոխառյալ շաղկապի տարբերակների առկայությունը (*զերա // զիրա // զերե* են): Ձայնարկություններ և վերաբերականներ հազվադեպ են գործածվում և որևէ տարբերակիչ հատկանիշով չեն բնութագրվում:

Թ. Վերոնշյալ երկերի շարահյուսական համակարգում գրաբարյան տարրերին զուգահեռ հանդիպում են աշխարհաբարի շարահյուսության որոշ հատկանիշներ և կառույցներ՝ վկայելով աշխարհաբարի շարահյուսության նորմավորման մասին, օրինակ՝ ենթական հիմնականում առաջադաս է (*«Մին մարդ մի ունի այսչափ մառչի...», «...տերևն ամենևին չի պիտի թափվի...»* են), որոշիչը և հատկացուցիչը՝ նույնպես (*մեղաոր մարդկանց չար գործոցն, փրկագործութեան պարուն* են), բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունը որոշվում է ոչ միայն առանց կետադրության, այլև կետադրությամբ:

Ժ. Նախադասության տեսակների մեջ լայն գործածություն ունեն գեղչված ենթակայով թերի նախադասությունները, որոնք շատ հաճախ են կիրառվում հատկապես «Արիեստ համարողութան» երկում (*«Երբ որ մին թիւ մի կու բարդեմք, պիտիք յեդ դառնալ, փորձել, թէ շիտակ ենք բարդեր, թէ չէ»* են): Այս երկերի շարահյուսական համակարգին միակազմ, պարզ համառոտ նախադասություններ հիմնականում բնորոշ չեն: Մասնակի ժխտումով ժխտական, ճարտասանական հարցումով հարցական, ըղձական և բացականչական նախադասություններ նույնպես հազվադեպ են գործածվում: Լայն կիրառություն ունեն բարդ նախադասության տարբեր տեսակները:

ԺԱ. 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական քննության հիման վրա անդրադարձ կատարելով *միասնական աշխարհաբարի* հարցին՝ հարկ է նշել, որ սույն երկերում աշխարհաբարը միասնական է այն առումով, որ դրանց հատուկ են և՛ արևելյան, և՛ արևմտյան բարբառախմբերի, հետագայում՝ արևելահայերենի ու արևմտահայերենի լեզվական տարբեր իրողություններ, որոնք ներկայացրել ենք մեր աշխատանքի առանձին բաժիններում: Սակայն դրանք հավասարաչափ չեն բաշխված. «Արիեստ համարողութան» և «Գանձ» երկերում առավել ընդգծված են արևելյան բարբառներին, իսկ «Պարզաբանութիւն»-ում՝ արևմտյան բարբառներին բնորոշ լեզվական իրողությունները:

ԺԲ. 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական քննությունը հիմք է տալիս նշելու, որ գործ ունենք գրաբարին ու միջին հայերենին հաջորդող մի լեզվավիճակի հետ, որը ներառում է հայերենի զարգացման այդ փուլերի հատկանիշներ, իսկ հնչյունական, բառապաշարային, ձևաբանական, շարահյուսական նոր իրողությունները հանդես են գալիս դեռևս չկանոնավորված կերպով: Այս երկերը վստահաբար մեծ դեր են ունեցել աշխարհաբարի մշակման և հետագա կանոնարկման գործում՝ ուրվագծելով դրա նորմավորման ուղիները:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Պողոսյան Թ., Մաթեմատիկական տերմինաբանական համակարգը «Արիեստ համարողութեան» գրքում, Հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական տեղեկագիր, Երևան, 2014, 2-3 (21-22), էջ 141-152:

2. Պողոսյան Թ., «Արիեստ համարողութեան» երկը՝ որպես աշխարհաբար առաջին տպագիր գիրք, «Էջմիածին» հանդես, Ա. Էջմիածին, 2015, Թ., էջ 83-97:

3. Պողոսյան Թ., Վաղ աշխարհաբարի լեզվալիճակը՝ ըստ աշխարհաբար առաջին տպագիր գրքերի, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական V գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2015, էջ 32-45:

4. Պողոսյան Թ., Դավթի սաղմոսների աշխարհաբար առաջին տպագիր մեկնության լեզվական համակարգը, Բանբեր Երևանի համալսարանի. հայագիտություն, Երևան, 2016, 1 (19), էջ 68-81:

5. Պողոսյան Թ., Աշխարհաբարի վաղ շրջանի խոնարհման առանձնահատկություններ՝ ըստ աշխարհաբար առաջին տպագիր գրքերի, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016, 1.2 (12), էջ 35-41:

6. Պողոսյան Թ., Աշխարհաբար առաջին տպագիր գրքերի մաթեմատիկական տերմինաբանական համակարգերի համեմատական քննություն, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016, 1.2 (12), էջ 28-34:

7. Պողոսյան Թ., ԺԷ. դարի աշխարհաբար տպագիր գրքերը, «Էջմիածին» հանդես, Ա. Էջմիածին, 2016, Դ., էջ 73-91:

8. Պողոսյան Թ., «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» գրքի բառապաշարը, Պրոֆեսոր Մանվել Ասատրյանի 90-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների ժողովածու, Երևան, 2016, էջ 151-169:

9. Պողոսյան Թ., Աշխարհաբար առաջին տպագիր գրքերի լեզվի հնչյունական բնութագիրը, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայագիտական հանդես, Երևան, 2016, 2 (32), էջ 83-94:

10. Պողոսյան Թ., «Գանձ չափոյ, կշռոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի» երկը՝ որպես ԺԷ. դարի աշխարհաբար տպագիր գիրք, «Էջմիածին» հանդես, Ա. Էջմիածին, 2017, Է., էջ 60-69:

11. Պողոսյան Թ., 17-րդ դարի աշխարհաբար առաջին տպագիր գրքերի լեզվի ոճական բնութագիրը, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայագիտական հանդես, Երևան, 2017, 4 (38), էջ 23-32:

12. Պողոսյան Թ., 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի շարահյուսական համակարգի յուրահատկություններ, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայագիտական հանդես, Երևան, 2019, 3 (45), էջ 11-22:

ПОГОСЯН ТАМАРА НЕЛЬСИКОВНА
ЛИНГВИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ НАПЕЧАТАННЫХ НА АШХАРАБАРЕ КНИГ
XVII ВЕКА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук
по специальности 10.02.01 – «Армянский язык»

Защита состоится 30 марта 2020 г. в 15:00 на заседании
специализированного совета ВАК 019 по лингвистике, действующего в Институте
языка им. Р. Ачаряна НАН РА (адрес: Ереван, 0015, ул. Григора Лусаворича 15)

РЕЗЮМЕ

Цель диссертации. Цель диссертации – провести наиболее полный и комплексный анализ языка напечатанных на ашхарабаре книг XVII века, дать общую характеристику ашхарабара XVII века, показать пути дальнейшего развития ашхарабара и двух ветвей армянского языка.

Актуальность диссертации. Напечатанные на ашхарабаре книги XVII века играют исключительную роль в развитии армянской печати и изучении армянского языка. Рассматриваемый период ознаменовался началом нового этапа в истории армянского языка – формированием ранней языковой ситуации ашхарабара. История развития ашхарабара, в том числе и начальный этап его формирования, нуждаются в дальнейших исследованиях.

Актуальность данной диссертации обусловлена недостаточной изученностью ашхарабара XVII века и языка напечатанных на ашхарабаре книг этого периода, т.к. несмотря на наличие упоминаний о языке исследуемых сочинений, все таки их языковые особенности не были детально и всесторонне исследованы, некоторые языковые пласты не были проанализированы должным образом. Из этого следует, что изучение языка указанных книг и их языковых особенностей актуально для арменистики.

Научная новизна и практическая ценность диссертации. Нами впервые дано по возможности полное описание и проведено оценивание языка напечатанных на ашхарабаре книг XVII века. Была предпринята попытка изучить и описать языковые особенности языка упомянутых сочинений на фонетическом, лексикологическом, морфологическом, синтаксическом уровнях, оценить их роль в формировании ашхарабара и в процессе его дальнейшего нормирования.

Данное исследование, в котором проводится системный анализ языка напечатанных на ашхарабаре книг XVII века, может быть полезно филологам, изучающим ашхарабар, историю армянского языка, диалектологию, студентам специализированных факультетов, а также всем, кто интересуется арменоведением.

Структура диссертации. Диссертация состоит из Введения, четырех глав с соответствующими разделами, Заключения, списка сокращений, списка использованной литературы и Приложений. Общий объем работы составляет 144 страниц.

Во **Введении** рассматриваются ашхарабар, история его формирования, некоторые аспекты его характеристики, представлена степень изученности вопроса.

Глава I. Напечатанные на ашхарабаре книги XVII века. Глава состоит из 3 разделов, в которых по отдельности изучаются структура этих книг, цель их создания, мнения ученых о причинах их создания, повествуется об авторах (переводчик, комментатор), а также приводится оценка этих сочинений, данная исследователями.

Глава II. Исследование фонетической системы и лексики. В данной Главе проводится анализ особенностей фонетической системы и лексического состава напечатанных на ашхарабаре книг XVII века. Нами была проведена классификация соответствующих языковых единиц этих книг и их анализ. Глава состоит из 2 разделов с соответствующими параграфами: особенности фонетической системы и исследование лексики.

Глава III. Исследование морфологической системы. Глава состоит из 5 разделов: система склонения, формирование множественного числа, грамматическая категория определенности / неопределенности, особенности системы спряжения и другие морфологические явления. В рамках изучения морфологической системы мы представили в таблицах проведенные нами классификации грамматических категорий.

Глава IV. Исследование синтаксической системы. Синтаксическая система представлена на основе наиболее характерных особенностей, показывающих свойственные ашхарабару XVII века закономерности. Синтаксические особенности языка сочинений мы описали в следующих параграфах Главы IV: средства синтаксической связи, способы синтаксической связи, типы предложений, простое предложение: главные и второстепенные члены предложения и сложное предложение.

В **Заключении** изложены результаты проведенного анализа языка напечатанных на ашхарабаре книг XVII века.

Диссертационное исследование имеет 3 приложения. Основные положения диссертации были отражены в 12 статьях автора, опубликованных в различных научных изданиях.

TAMARA NELSIK POGHOSYAN
LINGUISTIC ANALYSIS OF THE 17th CENTURY MODERN ARMENIAN
(ASHKHARABAR) PRINTED BOOKS

Thesis for PhD degree in Philology, specialty 10.02.01 – “Armenian Language”.

The defense of the thesis will be held on 30 March, 2020 at 15:00, at the session of Specialized Council on Linguistics of 019 HAC in the Institute of Language after H. Acharyan NAS RA (address: Yerevan, 0015, Grigor Lusavorich St. 15)

SUMMARY

The aim of the dissertation: The aim of the dissertation is to investigate the language of the 17th century Modern Armenian printed books as completely as possible by means of which we may also characterize the 17th century Modern Armenian language, outlining the basis for the further development of it and the two branches of Armenian.

The topicality of the dissertation: The 17th century Modern Armenian printed books have a special role in studying the Armenian printing and language history. This century is marked with the beginning of a new phase in our language and with the emergence of the early language situation of Modern Armenian. The Modern Armenian history, especially its preliminary period, is not completely disclosed and it needs further research.

The topicality of the dissertation lies in the non-satisfactory investigation of the 17th century language situation and the language of the 17th century Modern Armenian printed books because, in spite of the brief reference to the above-mentioned writings' language, their language system has not been completely analyzed and some linguistic layers have not been properly discussed. Therefore, the investigation of these books' language and the analysis of various language specificities are very topical for Armenian studies.

The scientific novelty and practical value of the dissertation: Our research is the first one in the sphere of the *complete* description and assessment of the language of the 17th century Modern Armenian printed books. An attempt is made to *completely* describe and analyze the linguistic peculiarities of the aforementioned writings at phonetic, word-formation, morphological and syntactic levels, assessing their role in the process of the formation and subsequent normalization of the Modern Armenian language.

As a systematized research of the language of the 17th century Modern Armenian printed books, this work can serve and be useful for philologists specializing in both Modern Armenian and the history of the Armenian language and dialects, for the students of professional faculties, and for those who are interested in Armenian studies.

The structure of the dissertation: The dissertation consists of an introduction, four chapters with the corresponding subchapters, conclusion, list of summaries, references, and appendices. The volume of the dissertation is 144 pages.

Introduction refers to the Modern Armenian language, some questions related to its formation and description. The degree of the investigation is briefly presented.

Chapter I. *The 17th century Modern Armenian printed books.* The chapter consists of three subchapters, each of which includes the structure and the aim of the above-mentioned three books, the existing opinions about their creation, author (translator, interpreter), the assessment of the writings and so on.

Chapter II. *The analysis of the phonetic system and vocabulary.* In this chapter of the dissertation, we have investigated various peculiarities of the phonetic system and vocabulary of the 17th century Modern Armenian books. A number of classifications have been made. This chapter consists of two subchapters: the peculiarities of the phonetic system, the analysis of vocabulary, which have appropriate subsections.

Chapter III. *The analysis of the morphological system.* This chapter consists of five subchapters: the formation of declension, the formation of plurality, the category of determination, the peculiarities of the conjugation system, and other morphological phenomena.

Chapter IV. *The analysis of the syntactic system.* We have presented the syntactic system on the basis of the most characteristic peculiarities to show what basic patterns occur in the language representing the 17th century Modern Armenian. We have investigated these peculiarities in the following parts of this chapter: syntactic means of connection, syntactic ways of connection, sentence types, a simple sentence: primary and secondary members of the sentence and a compound sentence.

Conclusion sums up the main outcomes (12 points) of the research.

The work ends with three attachments. The fundamentals of the dissertation are reflected in the 12 articles published in various scientific magazines.